

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/4

17 հունվարի 2017թ.

Քննարկվեց Գոռ Վերմիշյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 16.11.2016թ. թիվ 337444/01 որոշման դեմ:

Գոռ Վերմիշյանի գանգատում բերված փաստարկները.

Գոռ Վերմիշյանը հայտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 16.11.2016թ. թիվ 337444/01 որոշման հետ համաձայն չէ և խնդրում է այն վերանայել և իրեն ազատել վարչական տուգանքից, քանի որ իրեն ծանուցում չի եկել Նոր Նորքի հարկային տեսչությունից հարկ վճարելու վերաբերյալ: Մասնավորապես, նա ներկայացել է Նոր Նորքի հարկային տեսչություն հոկտեմբերի 1-20 ընկած ժամանակահատվածում ու իրեն տեղեկացրել են, որ վճարում պետք է կատարի 20.10.2016թ. հետո, առանց կոնկրետ օրը նշելու: Կրկին անգամ ներկայացել է Նոր Նորքի հարկային տեսչություն պարզաբանելու մեկ տարվա ընթացքում 2-րդ մեքենան վաճառելու հետ կապված հարկը վճարելու համար, սակայն չի ստացել համապատասխան պատասխան, որի պատճառով ստացել է վարչական տուգանք 20.000 դրամի չափով, 03.11.2016թ. հարկը վճարելու հետևանքով:

Ելնելով վերոգրյալից՝ Գոռ Վերմիշյանը խնդրում է վերանայել ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 16.11.2016թ. թիվ 337444/01 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 5595 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 16.11.2016թ. թիվ 5595 արձանագրությունը պարզել է, որ ինքնուրույն հարկ վճարող Գոռ Վերմիշյանը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2016թ. 3-րդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկը: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169¹-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 16.11.2016թ. ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 337444/01 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում), որով Գոռ Վերմիշյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Գոռ Վերմիշյանի կողմից իրականացվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարման գործարք, այն է՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ կատարվել է նրա սեփականությունը հանդիսացող ավտոմեքենաների օտարում, որոնցից երկրորդն օտարվել է դրա ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում: Մասնավորապես, 2016թ. հուլիսի 11-ին (մեկ օրացուցային տարվա ընթացքում երկրորդ անգամ) Գոռ Վերմիշյանի կողմից իրացվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող «Ֆոլցվագեն Գոլֆ» մակնիշի ավտոմեքենա:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածների համաձայն ԱԱՀ վճարողները մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ իրենց գրանցման վայրի հարկային տեսչության մարմին են ներկայացնում պետական բյուջե ԱԱՀ-ի վճարման համար համապատասխան հաշվարկներ:

Իր հերթին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը, հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, կրում են հարկ վճարողները և դրանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք:

Տվյալ դեպքում Գոռ Վերմիշյանը պարտավոր էր վերագրյալ գործարքի մասով մինչև 2016թ. հոկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում ներկայացնել ԱԱՀ-ի հաշվարկ, որը ներկայացրել է միայն 03.11.2016թ.: Այսինքն, նրա կողմից թույլ է տրվել զանցանք, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169¹-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 16.11.2016թ. թիվ 337444/01 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ